ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ԱՆԱՀԻՏ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՏՀ

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. *տեղեկատվական տեխնոլոգիաներ, առցանց աշխատանքի շուկա, crowdfunding, gig economy, աշխատուժի լիզինգ, կանաչ տնտեսություն*

Գիտական աշխատության մեջ քննարկվել են առցանց աշխատանքի շուկայի զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում և այլ երկրներում: Դիտարկվել է զբաղվածության նոր տեխնոլոգիաների, հատկապես gig economy-ի և crowdsourcing-ի կիրառումը ԱՄՆ-ում:

Միաժամանակ, վերլուծվել են զբաղվածության նոր տեխնոլոգիաների, այդ թվում՝ աշխատուժի լիզինգի և կանաչ աշխատատեղերի կիրառման հնարավորությունները ՀՀ-ում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը ողջ աշխարհում նպաստում է զբաղվածության ընդլայնմանն ուղղված ենթակառուցվածքների զարգացմանը: Իսկ այդ հանգամանքը, իր հերթին, պայմանավորում է նախկինում տնտեսապես ոչ ակտիվ բնակչության ներգրավումն աշխատանքային գործընթացում:

Օքսֆորդի ինտերնետի ինստիտուտի տվյալների համաձայն՝ առցանց աշխատաշուկայի ինդեքսի (OLI) գծով առաջատար է ԱՄՆ-ը, որը զբաղեցնում է էլեկտրոնային աշխատաշուկայի 52 տոկոսը, որին հետևում են Միացյալ Թագավորությունը (6.3 տոկոս), Հնդկաստանը (5.9 տոկոս) և Ավստրալիան (5.7 տոկոս): Ընդհանուր առմամբ, եվրոպական երկրները զբաղեցնում են էլեկտրոնային աշխատաշուկայի 16 տոկոսը:

Առցանց աշխատաշուկայում գործատուների կողմից առավելագույն պահանջարկ են վայելում տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի մասնագետները:

ԱՄՆ-ում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումն էական ազդեցություն է գործում աշխատանքի շուկայի արդիականացման վրա: Աշխատատեղերի ավելի արագ աճ է գրանցվում տնտեսության նորագույն տեխնոլոգիաների և գիտատար ոլորտներում՝ գրեթե երկու անգամ գերազանցելով եվրոպական համապատասխան ցուցանիշը[1]: Դեռևս 2009 թ. ընդունված ծրագրի (Educate to Innovate) համաձայն՝ ավելի քան մեկ միլիարդ ԱՄՆ դոլար է հատկացվել գիտատար և բարձր տեխնոլոգիական ոլորտների հետ կապված կրթական համակարգը բարելավելու նպատակով: 2015–2016 թթ. ևս ավելի քան կես միլիարդ ԱՄՆ դոլար է տրամադրվել մասնավոր հատվածին՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում երիտասարդների ուսուցման և աշխատատեղերի ստեղծման աջակցության համար: Արդյունքում վերջին տասնամյակի ընթացքում ԱՄՆ-ի աշխատաշուկան ավելի մրցունակ է դարձել:

[1] "The future of work: Digitalisation in the US labour market", EU, European Parliament, 2016.

Ներկայումս ԱՄՆ-ում կիրառվում են զբաղվածության նոր տեխնոլոգիաներ, այդ թվում՝ on-line gig economy-ն և crowdsourcing-ը: On-line gig economy-ն կամ առցանց աշխատանքների համակարգ առցանց կարճաժամկետ պայմանագրերի կնքումն է անհատ աշխատողների և կազմակերպությունների, ձեռնարկությունների միջև:

Այս համակարգը թույլ է տալիս գործատուին ընտրել լավագույն աշխատողներին՝ միաժամանակ կատարելով խնայողություններ, իսկ անհատ կատարողին՝ ընտրել հարմար աշխատանքային պայմանագիրը՝ հաշվի առնելով գլոբալ հնարավորությունները: 2014 թ. յուրաքանչյուր երեք ամերիկացիներից մեկը կամ 53 մլն մարդ ընդգրկված էր այս համակարգում՝ աշխատելով ազատ ժամանակացույցով (freelance), իսկ մինչև 2020 թ. այս ցուցանիշը կընդգրկի ամերիկյան աշխատուժի ավելի քան 40 տոկոսը: Զբաղվածության այս եղանակով ապահովվում է 715 մլրդ ԱՄՆ դոլարի եկամուտ:

Gig economy-ն գործունեություն է ծավալել մի շարք ոլորտներում, այդ թվում՝ բիզնեսի և առաքման, բժշկական և անձնական խնամքի, տնային և վարորդական ծառայությունների:

Crowdsourcing -ն առաջին անգամ կիրառվել է 2005 թ. և ներկայացնում է մի յուրահատուկ մոդել, որտեղ անհատները կամ կազմակերպություններն անհրաժեշտ գաղափարներ կամ ծառայություններ ստանալու նպատակով կիրառում են համացանցի օգտատերերի առաջարկությունները: Այս եղանակի առավելությունը արագության, ճկունության, նվազագույն ծախսերի և բազմազանության մեջ է: Crowdsourcing-ի տեխնոլոգիաները կիրառվում են հանրահայտ ընկերությունների, այդ թվում՝ Microsoft-ի, Toyota-ի և General Electric-ի կողմից:

Այսպիսով, ըստ փորձագիտական հաշվարկների gig economy-ի և crowdsourcing-ի հնարավորությունների օգտագործումը կնպաստի մինչև 2025 թ. գլոբալ ՀՆԱ աճին՝ 2.7 տրիլիոն ԱՄՆ դոլարի չափով, նախկինում տնտեսապես ոչ ակտիվ բնակչության զգալի մասնակցության շնորհիվ:

ԱՄՆ-ն նաև բնութագրվում է սկսնակ ձեռնարկատիրական գործունեության (start-up) ամենաբարձր ցուցանիշով հատկապես Կալիֆոռնիայի նահանգի Սիլիկոնային հովտում, առավելապես՝ շնորհիվ վենչուրային ֆինանսավորման:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը ՀՀ-ում նույնպես նպաստում է զբաղվածության ապահովման ենթակառուցվածքների զարգացմանը: Հատկապես ակնառու է վերջին տասնամյակում աշխատանքի տեղավորման էլեկտրոնային ցանցի զարգացումը: Ներկայումս առավել հանրահայտ են list.am, jobs.am, staff.am, careercenter.am, hr.am, ijob.am, job, banks.am և resume.am կայքէջերը, որոնք առաջարկում են ոչ միայն աշխատատեղեր, այլև վերապատրաստման դասընթացներ: Իսկ որոշ կայքէջեր առաջարկում են նաև առցանց աշխատանքների կատարում:

2017 թ. ՀՀ-ում ստեղծվել է նաև հատուկ crowdfunding պլատֆորմ, որը նախատեսված է առանձին, հետաքրքրություն ներկայացնող նախագծերի ֆինանսավորման համար: Ըստ փորձագիտական գնահատումների՝ գլոբալ ինտերնետային crowdfunding-ի միջոցով տարեկան հավաքագրվում է մինչև 30-35 մլրդ ԱՄՆ դոլար:

Ինչպես ցույց են տվել վերլուծությունները, աշխատանքի տեղավորման էլեկտրոնային միջոցներն առաջարկում են ավելի բարձր որակավորում և գիտելիքներ պահանջող և, համապատասխանաբար, ավելի բարձր վարձատրվող աշխատանքներ[1]:

ՀՀ-ում SS ոլորտի բուռն զարգացումը և տվյալ բնագավառում զբաղվածների քանակի անշեղ աճը հանրապետությունում առցանց աշխատաշուկայի զարգացման հիմքն են: Ընդ որում, կանխատեսվում է նաև այլ, այդ թվում՝ ֆինանսական, հաշվապահական և իրավաբանական ծառայությունների էլեկտրոնային մատուցման ընդլայնումը:

Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ SS ոլորտի զարգացմանն է նպաստել աութսորսինգը՝ ՀՀ-ում առկա համեմատաբար ավելի էժան և որակյալ աշխատուժի շնորհիվ:

ՀՀ-ում հեռանկարային է նաև զբաղվածության այնպիսի տեխնոլոգիաների կիրառումը, ինչպիսիք են աշխատուժի վարձակալությունը (լիզինգը) և կանաչ աշխատատեղերի ստեղծումը կամ բնապահպանական զբաղվածությունը՝ հատկապես վերարտադրվող էներգետիկայի, թափոնների վերամշակման, էկոտուրիզմի և տրանսպորտի բնագավառներում:

2014–2025 թթ. ՀՀ հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսվում է որակյալ աշխատատեղերի ստեղծում աշխատուժի մասնագիտական որակավորման բարձրացմամբ, ինչպես նաև բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծմամբ: Մասնավորապես՝ մինչև 2025 թ. նախատեսվում է ոչ գյուղատնտեսական ոլորտում 2012 թ. համեմատ ապահովել զբաղվածության աճ 220 հազարով, ինչը հնարավոր է ՀՆԱ տարեկան 6 տոկոսի չափով իրական աճի պայմաններում: Դրան կնպաստի նաև մինչև 2025 թ. ՀՆԱ-ում փոքր և միջին ձեռնարկությունների մասնաբաժնի ավելացումը՝ 40 տոկոսից հասցնելով 60 տոկոսի: Արդյունքում 2025 թ. ՀՀ-ում զբաղվածության մակարդակը համադրելի կլինի ԵՄ զարգացած երկրների զբաղվածության մակարդակին (70 տոկոս), իսկ գործազրկության ցուցանիշը կնվազի մինչև 10 տոկոս:

АНАИТ МЕЛКУМЯН

НОВЫЕ ТЕХНОЛОГИИ ЗАНЯТОСТИ В РА

Ключевые слова: *информационные технологии, электронный рынок труда, лизинг рабочей силы, зеленая экономика*

В научной работе рассматрияаются проблемы развития электронного рынка труда в РА и других странах. В частности, анализируется использование новых технологий занятости в США, включая “gig economy" и "crowdsourcing".

Одновременно рассматриваются возможности применения новых технологий занятости в РА, в том числе лизинга рабочей силы и “зеленых” рабочих мест или занятости, направленной на защиту экологической среды.

---

[1] Գործազրկությունը և աշխատավարձի անհավասարությունը ՀՀ-ում, «Ամբերդ» մատենաշար, Եր., «Տնտեսագետ», 2014:

ANAHIT MELKUMYAN

EMPLOYMENT NEW TECHNOLOGIES IN THE REPUBLIC OF ARMENIA

Key Words: *information technologies, on-line labour market, labour leasing, green economy*

The online labour market development problems in the RA and other countries are considered in the article. Particularly, the implementation of new technologies of employment in USA is considered including the on-line gig-economy and crowdsourcing.

Simultaneously the opportunities for the new technologies of employment in the RA are discussed including labour leasing and green jobs creation.

ՇՈՒՇԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ
Կրտսեր գիտաշխատող, ՀՊՏՀ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնաբառեր. *պարտքային անվտանգություն, գլոբալ ճգնաժամ, արտաքին պարտք, պարտքային կայունության ցուցանիշներ, տնտեսական աճ*

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքներից մեկը պետական պարտքի ավելացումն է գլոբալ մասշտաբով: Բացառություն չէր նաև Հայաստանի Հանրապետությունը: ՀՀ պետական պարտքը 2009–2016 թթ. ավելացել է մոտ 2.3 անգամ, որը պարտքային անվտանգության գնահատման հիրաժեշտություն է առաջադրում: Հոդվածում դիտարկվել են ՀՀ պետական պարտքի ներկայիս վիճակը և դրա ազդեցությունը երկրի տնտեսական զարգացման վրա:

Երկար կյանք ու արևշատություն ցանկանանք մեր պատանիներին, քանի որ հենց նրանք են ժառանգելու մեր պետության ունեցած արտաքին պարտքը

Հ. Հուվեր

21-րդ դարի ամենաարդիական խնդիրներից մեկը համաշխարհային մաշտաբով պետական պարտքի կտրուկ աճն է: Պարտքային ռիսկերը զգալիորեն սրվեցին գլոբալ ֆինանսական ճգնաժամի ազդեցությամբ: Ըստ փորձագիտական գնահատականների՝ 2017 թ. աշխարհի շուրջ 80 երկրում առկա են պարտքային ճգնաժամի մեջ հայտնվելու ռիսկեր[1]:

[1] http://jubileedebt.org.uk/press-release/global-debt-crises-threats-increase-across-world